

[1] Դուրս գրման ամսաթիվ			Հաշիվ վավերագիր (ծառայությունների մատուցման, աշխատանքների կատարման)	[2] Սերիա	[3] Համար
29	Սեպտեմբեր	2022 թ.		Բ	6310511689
[4] Մատուցման ամսաթիվը				Ճշգրտվող հաշիվ վավերագրի	
29	Սեպտեմբեր	2022 թ.		Սերիա	Համար
			Ճշգրտվող հաշիվ վավերագրի դուրս գրման ամսաթիվ		
Պայմանագիր		[5] Կնքման ամսաթիվ	[6] Համար		
		8 Փետրվար, 2022 թ.	Թարգմանչական ծառայությունների մատուցման պայմանագիր թիվ ՀԳՂ-7-22		
[7] Լրացուցիչ տվյալներ (պայմաններ)					
Արձանագրություն 9					
[7.1] ՀԴՄ կտրոնի համար					

Ծառայություններ մատուցող (աշխատանքներ կատարող) անձի									
[8] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ)	8	2	2	7	5	6	8	2	
[9] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը									
[10] Անվանումը	ՍՈՖՅԱ ՄԵՐՈԲԹԱՆ Անհատ ձեռնարկատեր (ԱՁ)								
[11] Բանկային տվյալները	Ամերիաբանկ ՓԲԸ		N 1570064545140100						
[12] Գտնվելու վայրը (հասցեն)	ԵՐԵՎԱՆ ՆՈՐ ՆՈՐԲ ՆՈՐ ՆՈՐԲ ԹԱՂԱՄԱՍՆՈՎՆ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԹՂՄ. 28 22								
[13] Լրացուցիչ տվյալներ									

Ծառայություններ (աշխատանքներ) ստացող անձի									
[14] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) (ֆիզիկական անձի անձնագրի սերիան և համարը)	0	2	5	0	6	6	3	4	
[15] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը									
[16] Անվանումը	«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԽԱՁՈՒԹՅՈՒՆ» Պետական կառավարչական հիմնարկ								
[17] Բանկային տվյալները	ՀՀ ֆին նախ աշխ. գործ. վարչ.		N 900011180081						
[18] Գտնվելու վայրը (բնակության վայրը)	ԵՐԵՎԱՆ ԿԵՆՏՐՈՆ ԿԵՆՏՐՈՆ ԹԱՂԱՄԱՍ ՎԱԶԳԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ Փ. 5								
[19] Լրացուցիչ տվյալներ									
[20] Ում միջոցով	Անուն, ազգանուն		Համար						
	Լիազորագիր		Ամսաթիվ						

[21] Ծառայությունների մատուցման (աշխատանքների կատարման) ծավալի և վճարման ենթակա գումարի հաշվարկը						
NN C/Կ	Ծառայությունների (աշխատանքների) անվանումը (բովանդակությունը)	Չավի միավորներ	Ընդհանուր ծավալը կամ ժամանակը րոշմը	Միավորի արժեքը	(%) Չափը	Արժեքը
1	2	3	4	5	6	7
1	Նատայա Կորոլկովայի վերաբերյալ որոշման հայերեն-ռուսերեն գրավոր թարգմանություն	Էջ	6	1000		6000
2	Իննամ Ուլլահի վերաբերյալ գրության անգլերեն-հայերեն գրավոր թարգմանություն	Էջ	2	1600		3200
3	09119422 քրեական գործով հայերեն-ռուսերեն գրավոր թարգմանություն	Էջ	94	1000		94000
4	69116422 քրեական գործով մեղադրական եզրակացության հայերեն-ռուսերեն գրավոր թարգմանություն	Էջ	173	1000		173000
5	14102321 քրեական գործով հայերեն-ռուսերեն գրավոր թարգմանություն	Էջ	19	1000		19000
6	27101322 քրեական գործով հայերեն-ռուսերեն գրավոր թարգմանություն	Էջ	11.5	1000		11500
7	22-209-20 վարույթով հայերեն-անգլերեն գրավոր թարգմանություն	Էջ	25	1600		40000
Ընդամենը						346700

Օտարաշխուհի
մատուցող
(աշխատանք
կատարող)

SEROBYAN SOFYA 6401890169

(ստորագրությունը, անունը, ազգանունը)

29/09/2022 11:26:54

Օտարաշխուհի
(աշխատանք
ստացող)

GRIGORYAN SUSANNA 7403690397

(ստորագրությունը, անունը, ազգանունը)

29/09/2022 12:38:43

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

Թարգմանիչ հրավիրելու մասին

17 օգոստոսի 2022թ.

քաղաք Երևան

Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի դատախազի տեղակալ, արդարադատության առաջին դասի խորհրդական Ա.Գ. Կոստանդյանս, ուսումնասիրելով ՌԴ իրավասու մարմինների կողմից այդ երկրի քրեական օրենսգրքի 228.1 հոդվածի 1-ին մասի մեղադրանքով հետախուզվող **ՆԱՏԱԼԻԱ ԱՆԱՏՈԼԻԻ ԿՈՐՈԼԿՈՎԱՅԻՆ (НАТАЛЬЯ АНАТОЛЬЕВНА КОРОЛЬКОВА)** հանձնման նպատակով կալանավորման ժամկետը երկարաձգելու վերաբերյալ միջնորդությունը քննության առնելու մասին Երևան քաղաքի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2022 թվականի օգոստոսի 11-ի № ԵԴ/0592/06/22 որոշումը,

Պ Ա Ր Ձ Ե Ց Ի՝

Հայաստանի Հանրապետության (այսուհետ՝ ՀՀ) ոստիկանության Երևան քաղաքի վարչության «Չվարթնոց» օդանավակայանի գծային բաժնի քրեական հետախուզության բաժանմունքի ծառայողները, 2022 թվականի մայիսի 7-ին՝ ժամը 12⁰⁰-ին, «Չվարթնոց» օդանավակայանի սահմանային գոտուց, Ռուսաստանի Դաշնության (այսուհետ՝ ՌԴ) ներքին գործերի նախարարության, Պրիմորսկի երկրամասի Վլադիվաստոկ քաղաքի ՆԳ վարչության Պերվոմայսկի ՆԳ բաժնի միջոցով, այդ երկրի քրեական օրենսգրքի 228.1 հոդվածի 1-ին մասի (Թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի և դրանց պրեկուրսորների ապօրինի արտադրելը, իրացնելը կամ փոխադրելը) մեղադրանքով 2019 թվականի դեկտեմբերի 12-ից հետախուզման մեջ գտնվելու կասկածանքով, բաժին են բերման ենթարկել Դուբայ-Երևան թիվ 2206 չվերթի ուղևոր ՌԴ քաղաքացի **ՆԱՏԱԼԻԱ ԱՆԱՏՈԼԻԻ ԿՈՐՈԼԿՈՎԱՅԻՆ (НАТАЛЬЯ АНАТОЛЬЕВНА КОРОЛЬКОВА)**, ում նույն օրը՝ ժամը 14⁰⁰-ին, ձերբակալել են:

ՆԱՏԱԼԻԱ ԿՈՐՈԼԿՈՎԱՅԻՆ (НАТАЛЬЯ КОРОЛЬКОВА) հայտնաբերման վերաբերյալ փաստաթղթերը, նույն օրը փոխանցվել են Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի դատախազություն:

Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Ա. Ալեքսանյան) 2022 թվականի մայիսի 9-ի № ԵԴ/0523/06/22 որոշմամբ բավարարվել է Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի դատախազության միջնորդությունը, **ՆԱՏԱԼԻԱ ԿՈՐՈԼԿՈՎԱՅԻ (НАТАЛЬЯ КОРОЛЬКОВА)** նկատմամբ 40 (քառասուն) օր ժամկետով ժամանակավոր կալանավորում կիրառելու մասին:

ՆԱՏԱԼԻԱ ԿՈՐՈԼԿՈՎԱՅԻՆ (НАТАЛЬЯ КОРОЛЬКОВА) հանձնելու համար կալանավորում կիրառելու վերաբերյալ Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի դատախազության ներկայացրած միջնորդությունը Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Ա. Պողոսյան) 2022 թվականի հունիսի 13-ի № ԵԴ/0592/06/22 որոշմամբ նույնպես բավարարվել է:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 479-րդ հոդվածի պահանջները պահպանելու, անձի հանձնման գործընթացը կազմակերպելու և իրականացնելու համար անհրաժեշտ է ժամանակ, մինչդեռ 2022 թվականի օգոստոսի 13-ին լրանում է

ՆԱՏԱԼԻԱ ԿՈՐՈԼԿՈՎԱՅԻ (НАТАЛЬЯ КОРОЛЬКОВА) կալանքի տակ պահելու ժամկետը, ինչի համար 2022 թվականի հուլիսի 29-ին վերջինիս հանձնման նպատակով կալանավորման ժամկետը երկարաձգելու վերաբերյալ միջնորդություն է ներկայացվել Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարան:

Դատարանի 2022 թվականի օգոստոսի 11-ի N° ԵԴ/0592/06/22 որոշմամբ բավարարվել է միջնորդությունը:

Համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ հոդվածի՝ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության լեզուն հայերենն է:

Հաշվի առնելով, որ **ՆԱՏԱԼԻԱ ԿՈՐՈԼԿՈՎԱՆ (НАТАЛЬЯ КОРОЛЬКОВА)** չի տիրապետում հայոց գրավոր լեզվին, իսկ Սոֆյա Սերոբյանը համապատասխան կրթություն և փորձ ունեցող անձ է, որն իր մասնագիտական գործունեության ընթացքում ռուսերեն լեզվով թարգմանչական գործառույթներ է իրականացնում, և որի ձեռնհասությունը կասկած չի հարուցում, որպիսի պայմանները համապատասխանում են ՀՀ վճռաբեկ դատականի 2017 թվականի մայիսի 4-ի թիվ ՎԲ-72/07 որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշումներին, ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ, 83-րդ հոդվածներով,

Ո Ր Ո Շ Ե Ց Ի՝

1. **ՆԱՏԱԼԻԱ ԿՈՐՈԼԿՈՎԱՅԻՆ (НАТАЛЬЯ КОРОЛЬКОВА)** հանձնելու համար կալանավորելու մասին 2022 թվականի օգոստոսի 11-ի N° ԵԴ/0592/06/22 որոշման ռուսերեն հաստատված գրավոր թարգմանությունն ապահովելու նպատակով որպես թարգմանիչ հրավիրել Սոֆյա Վազգենի Սերոբյանին (անձնագիր՝ AS սերիայի թիվ 0538862, տրված 13. 05. 2019թ. , 006-ի կողմից, ՀՀ ԱՆ տեղեկանք՝ տրված 27.12.2019թ.) և նրան ծանոթացնել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով նախատեսված իր իրավունքների և պարտականությունների հետ,

2. Թարգմանչին նախազգուշացնել, որ ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քրեական գործով թարգմանչի կողմից ակնհայտ սխալ թարգմանություն կատարելը պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից երեքհարյուրապատիկի չափով, կամ կալանքով՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով:

Վարչական շրջանի դատախազի տեղակալ, արդարադատության առաջին դասի խորհրդական

Ա. Կոստանոյան

Սրացա սույն որոշման օրինակը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ և ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածների քաղվածքները: Իմ իրավունքներն և պարտականությունները ինձ պարզ են և հասկանալի, ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին նախազգուշացված եմ:

Թարգմանիչ՝

Սոֆյա Սերոբյան

«17»...օգոստոսի... 2022 թ.

Սոֆյա Սերոբյան

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
թարգմանիչ հրավիրելու մասին

18 օգոստոսի, 2022թ.

ք. Երևան

ՀՀ գլխավոր դատախազության ՀՀ ազգային անվտանգության ծառայությունում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչության դատախազ Վ.Ղազարյանս, ուսումնասիրելով թիվ 58150222 քրեական վարույթի նյութերը,

Պ Ա Ր Զ Ե Ց Ի՝

ՀՀ ազգային անվտանգության ծառայության քննչական դեպարտամենտում քննվում է թիվ 58150222 քրեական վարույթն ըստ մեղադրանքի Ինամ Ուլլահ Շերզադի և Նեմաթոլլահ Քոչայի՝ 2003թ. ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 329-րդ հոդվածի 2-րդ մասով:

Ի.Ուլլահին Վրաստանի իրավասու մարմինների կողմից ՀՀ իրավասու մարմիններին ուղակված հանձնման միջնորդության կապակցությամբ լրացուցիչ տեղեկություններ տրամադրելու վերաբերյալ 2022 թվականի օգոստոսի 16-ին Վրաստանի գլխավոր դատախազությունից ստացվել է անգլերեն լեզվով գրություն:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ հոդվածի համաձայն՝

« 1. Վարույթի լեզուն գրական հայերենն է: Բացառությամբ դատարանի և վարույթի հանրային մասնակիցների, յուրաքանչյուր ոք իրավունք ունի վարույթի ընթացքում հանդես գալու այն լեզվով, որին տիրապետում է:

2. Վարույթն իրականացնող մարմնի որոշմամբ՝ վարույթի լեզվին չտիրապետող մեղադրյալին անհատույց հնարավորություն է տրվում թարգմանչի օգնությամբ իրականացնելու սույն օրենսգրքով սահմանված իր բոլոր իրավունքներն այն լեզվով, որին նա տիրապետում է:

3. Վարույթի լեզվին չտիրապետող համապատասխան անձին սույն օրենսգրքով նախատեսված՝ հանձնման ենթակա փաստաթղթերի պատճենները տրվում են նաև այն լեզվով, որին նա տիրապետում է:

4. Վարույթն իրականացնող մարմնին այլ լեզվով ներկայացված փաստաթուղթը վարույթի նյութերին կցվում է թարգմանչի վավերացրած հայերեն թարգմանության հետ»:

Նկատի ունենալով, որ անհրաժեշտ է նշված փաստաթղթերը անգլերենից հայերեն թարգմանել՝ ուստի կարիք կա որպես թարգմանիչ հրավիրել «Սոֆյա Սերոբյան» Ա/Զ-ի թարգմանիչ Մարինե Սերոբյանին:

Մարինե Սերոբյանն ունի համապատասխան կրթություն, ազատորեն տիրապետում է համապատասխան լեզուներին, նրա ձեռնհասությունը կասկած չի հարուցում:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ, 61-րդ հոդվածով,


Ո Ր Ո Շ Ե Ց Ի՝

ՀՀ ԱԱԾ քննչական դեպարտամենտում քննվող թիվ 58150222 քրեական վարույթով թարգմանություն իրականացնելու համար հրավիրել «Սոֆյա Սերոբյան» Ա/Ձ-ի թարգմանիչ Մարինե Սերոբյանին /անձնագիր AN0470399, տրված՝ 13.05.2013թ., 057-ի կողմից/:

Մարինե Սերոբյանին ծանոթացնել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 61-րդ հոդվածով սահմանված թարգմանչի պարտականություններին և իրավունքներին:

Մարինե Սերոբյանին նախազգուշացնել քրեական գործով թարգմանչի կողմից սխալ թարգմանություն կատարելու համար ՀՀ քրեական օրենսգրքի 504-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված քրեական պատասխանատվության մասին:

**ՀՀ ազգային անվտանգության ծառայությունում
մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ
հսկողության վարչության դատախազ**




Վաչե Ղազարյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ստացա սույն որոշման օրինակը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 61-րդ և ՀՀ քրեական օրենսգրքի 504-րդ հոդվածների քաղվածքները:

Իմ իրավունքներն և պարտականություններն ինձ պարզ են և հասկանալի, ՀՀ քրեական օրենսգրքի 504-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին նախազգուշացված եմ:

Թարգմանիչ



Մարինե Սերոբյան

« 18 » 08 2022 թ.

ՈՐՈՇՈՒՄ

թարգմանիչ հրավիրելու մասին

17.08.2022թ.

ք. Երևան

Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների դատախազության ավագ դատախազ Արթուր Մարտոյանս, ուսումնասիրելով մեղադրական եզրակացությամբ ստացված թիվ 09119422 քրեական վարույթի նյութերը,

ՊԱՐԶԵՑԻ

Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների դատախազություն մեղադրական եզրակացությամբ ստացվել է թիվ 09119422 քրեական վարույթի նյութերն ըստ մեղադրանքի՝ Արթուր Լևոնի Գալոյանի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 34-177-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով (1 դրվագ), 177-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով (4 դրվագ), 177-րդ հոդվածի 1-ին մասով (22 դրվագ), 177-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ և 3-րդ կետերով (1 դրվագ), 177-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետ (4 դրվագ), 34-177-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով (1 դրվագ), 177-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 3-րդ կետերով (1 դրվագ), 177-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով (1 դրվագ):

Մինչդատական քրեական վարույթի ընթացքում պարզվել է, որ մեղադրյալ Արթուր Գալոյանը չի տիրապետում հայերեն գրավոր լեզվին, այլ տիրապետում է ռուսերեն գրավոր լեզվին և քանի որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 27-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն վարույթի լեզվին չտիրապետող համապատասխան անձին սույն օրենսգրքով նախատեսված՝ հանձնման ենթակա փաստաթղթերի պատճենները տրվում են նաև այն լեզվով, որին նա տիրապետում է, ապա անհրաժեշտ է մեղադրական եզրակացության և դրան կցված հավելվածների և մեղադրական եզրակացությունը հաստատելու մասին որոշման հաստատված թարգմանությունները վերջինիս հասկանալի՝ ռուսերեն լեզվով տրամադրել նրան:

Վերոգրյալով պայմանավորված՝ անհրաժեշտ է որպես թարգմանիչ հրավիրել Սոֆյա Սերոբյան Ա/Չ թարգմանիչ Սոֆյա Սերոբյանին /անձնագիր AS 0538862/, ով ունի նոտարական գործողություններին մասնակցելու թարգմանչի վկայական՝ տրված ՀՀ ԱՆ-ի կողմից:

Նկատի ունենալով, որ Սոֆյա Սերոբյանը տիրապետում է հայերեն և ռուսերեն լեզուներին, նրա ձեռնհասությունը կասկած չի հարուցում, ուստի ելնելով վերոգրյալներից և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 27-րդ, 38-րդ և 61-րդ հոդվածով,

ՈՐՈՇԵՑԻ


Թիվ 09119422 քրեական գործով մեղադրական եզրակացության և դրան կցված հավելվածների և մեղադրական եզրակացությունը հաստատելու մասին որոշման

հայերենից ոուսերեն գրավոր թարգմանությունն իրականացնելու համար հրավիրել Սոֆյա Սերոբյան Ա/Ձ թարգմանիչ Սոֆյա Սերոբյանին:

Սոֆյա Սերոբյանին ծանոթացնել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 61-րդ հոդվածով սահմանված թարգմանչի պարտականություններին և իրավունքներին:

Սոֆյա Սերոբյանին նախազգուշացնել քրեական գործով թարգմանչի կողմից սխալ թարգմանություն կատարելու համար ՀՀ քրեական օրենսգրքի 504-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված քրեական պատասխանատվության մասին:

Արարկիր և Քանաքեռ-Զեյթուն
վարչական շրջանների դատախազության
ավագ դատախազ՝




Ա. Մարտոյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Սրապես սույն որոշման օրինակը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 61-րդ և ՀՀ քրեական օրենսգրքի 504-րդ հոդվածների քաղվածքները:

Իմ իրավունքներն և պարտականություններն ինձ պարզ են և հասկանալի, ՀՀ քրեական օրենսգրքի 504-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին նախազգուշացված եմ:

Թարգմանիչ



Սոֆյա Սերոբյան

« 17 » 08 2022 թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

թարգմանիչ հրավիրելու մասին

26.08.2022թ.

ք.Երևան

«Վառվառ» գլխավոր դատախազության բնակչության առողջության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության ավագ դատախազ Խ.Երեմյանս, ուսումնասիրելով Վասակ Գազանճյանի, Կարինե Գևորգյանի, Դավիթ Թադևոսյանի, Արկադի Մկրտիչյանի, Տատյանա Սոբեցկայաի, Դանիլա Գևորգյանի, Էլիզա Ավետիսյանի, Արթուր Ամիրադյանի և Գոռ Սարգսյանի վերաբերյալ «ՔԿ ՀԿԳ քննության գլխավոր վարչությունից մեղադրական եզրակացությամբ ստացված թիվ 69116422 քրեական վարույթի նյութերը,

Պ Ա Ր Ձ Ե Ց Ի՝

2022 թվականի օգոստոսի 22-ին «Վառվառ» գլխավոր դատախազության օրենսգրքի 203-րդ հոդվածի կարգով «Վառվառ» գլխավոր դատախազություն է ստացվել «ՔԿ ՀԿԳ քննության գլխավոր վարչությունում քննված թիվ 69116422 քրեական վարույթն ըստ մեղադրանքի Վասակ Գազանճյանի՝ «Վառվառ» օրենսգրքի 393-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով և 296-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով, Կարինե Գևորգյանի՝ «Վառվառ» օրենսգրքի 393-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով և 296-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով, Դավիթ Թադևոսյանի՝ «Վառվառ» օրենսգրքի 393-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով, Արկադի Մկրտիչյանի՝ «Վառվառ» օրենսգրքի 393-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով, Տատյանա Սոբեցկայաի՝ «Վառվառ» օրենսգրքի 393-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով, Դանիլա Գևորգյանի՝ «Վառվառ» օրենսգրքի 393-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով, Էլիզա Ավետիսյանի՝ «Վառվառ» օրենսգրքի 393-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով, Արթուր Ամիրադյանի՝ «Վառվառ» օրենսգրքի 393-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով և Գոռ Սարգսյանի՝ «Վառվառ» օրենսգրքի 393-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով:

2022 թվականի օգոստոսի 23-ին որոշում է կայացվել թիվ 69116422 քրեական վարույթով կազմված մեղադրական եզրակացությունը հաստատելու մասին:

«Վառվառ» գլխավոր դատախազության օրենսգրքի 27-րդ հոդվածի համաձայն՝

1. Վարույթի լեզուն գրական հայերենն է: Բացառությամբ դատարանի և վարույթի հանրային մասնակիցների, յուրաքանչյուր ոք իրավունք ունի վարույթի ընթացքում հանդես գալու այն լեզվով, որին տիրապետում է:

2. Վարույթն իրականացնող մարմնի որոշմամբ՝ վարույթի լեզվին չտիրապետող մեղադրյալին անհատույց հնարավորություն է տրվում թարգմանիչ օգնությամբ իրականացնելու սույն օրենսգրքով սահմանված իր բոլոր իրավունքներն այն լեզվով, որին նա տիրապետում է:

3. Վարույթի լեզվին չտիրապետող համապատասխան անձին սույն օրենսգրքով նախատեսված՝ հանձնման ենթակա փաստաթղթերի պատճենները տրվում են նաև այն լեզվով, որին նա տիրապետում է:

4. Վարույթն իրականացնող մարմնին այլ լեզվով ներկայացված փաստաթուղթը վարույթի նյութերին կցվում է թարգմանչի վավերացրած հայերեն թարգմանության հետ:

Նկատի ունենալով, որ սույն քրեական գործով մեղադրյալներ **Արկաղի Մկրտիչյանը, Տատյանա Սոբեցկայան և Դանիլա Գևորկյանը** գրական հայերենին չեն տիրապետում, այլ տիրապետում են ռուսերենին և իրենց հաշվին թարգմանություն ապահովելու ցանկություն չեն հայտնել, ուստի քրեական վարույթով կազմված մեղադրական եզրակացությունը՝ կից հավելվածներով, այն հաստատելու մասին որոշումը հայերենից ռուսերեն թարգմանելու ու մեղադրյալներին հասկանալի լեզվով հանձնելու և վերջիններիս բոլոր իրավունքներն իրականացնելու հնարավորություն տալու նպատակով անհրաժեշտ է որպես թարգմանիչ հրավիրել «Սոֆյա Սերոբյան» ԱԶ-ի թարգմանիչ Սոֆյա Վազգենի Սերոբյանին (անձնագիր՝ AS0538862, տրված՝ 13.03.2019թ., 006-ի կողմից, ՀՀ արդարադատության նախարարության կողմից տրված տեղեկանք՝ ռուսերեն լեզվի թարգմանչի որակավորում ստանալու մասին):

Սոֆյա Սերոբյանն ունի ռուսերեն լեզվի թարգմանչի որակավորում, ազատորեն տիրապետում է հայերեն և ռուսերեն լեզուներին, նրա ձեռնհասությունը կասկած չի հարուցում:

Վերոգրյալի հիման վրա և, ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 27-րդ հոդվածով, 38-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով և 61-րդ հոդվածով,


Ո Ր Ո Շ Ե Ց Ի՝

1. Վասակ Գազանճյանի, Կարինե Գևորգյանի, Դավիթ Թադևոսյանի, Արկաղի Մկրտիչյանի, Տատյանա Սոբեցկայաի, Դանիլա Գևորկյանի, Էլիզա Ավետիսյանի, Արթուր Ամիրադյանի և Գոռ Սարգսյանի վերաբերյալ ՀՀ ՔԿ ՀԿԳ քննության գլխավոր վարչությունից մեղադրական եզրակացությամբ ստացված թիվ 69116422 քրեական վարույթով թարգմանություն իրականացնելու համար հրավիրել «Սոֆյա Սերոբյան» ԱԶ-ի թարգմանիչ Սոֆյա Վազգենի Սերոբյանին (անձնագիր՝ AS0538862, տրված՝ 13.03.2019թ., 006-ի կողմից, ՀՀ արդարադատության նախարարության կողմից տրված տեղեկանք՝ ռուսերեն լեզվի թարգմանչի որակավորում ստանալու մասին):

2. Սոֆյա Սերոբյանին ծանոթացնել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 61-րդ հոդվածով սահմանված թարգմանչի իրավունքներին և պարտականություններին:

3. Սոֆյա Սերոբյանին նախազգուշացնել քրեական վարույթով առանց հարգելի պատճառների թարգմանություն կատարելուց հրաժարվելու և սխալ թարգմանություն կատարելու համար համապատասխանաբար ՀՀ քրեական օրենսգրքի 503-րդ և 504-րդ հոդվածներով նախատեսված քրեական պատասխանատվության մասին:

ՀՀ գլխավոր դատախազության բնակչության առողջության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության ավագ դատախազ՝




Խ.Երեմյան

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Ստացա սույն որոշման օրինակը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 61-րդ և ՀՀ քրեական օրենսգրքի 503-րդ և 504-րդ հոդվածների քաղվածքները:

Իմ իրավունքներն ու պարտականություններն ինձ պարզ են և հասկանալի, ՀՀ քրեական օրենսգրքի 503-րդ և 504-րդ հոդվածներով նախատեսված պատասխանատվության մասին նախազգուշացված եմ:

Թարգմանիչ՝



Սոֆյա Սերոբյան

« 26 » 08 2022թ.

Որոշում

Թարգմանիչ հրավիրելու մասին

« 26 » 08 2022թ.

ք.Արտաշատ

Արարատի մարզի դատախազության ավագ դատախազ Ա.Սաֆարյանս, քննարկելով թիվ 14102321 քրեական գործի նյութերը,

Պարզեցի՝

Արարատի և Վայոց ձորի մարզերի ընդհանուր իրավասության դատարանի վարույթում քննվում է թիվ 14102321 քրեական գործը՝ ամբաստանյալ Հենրիխ Սիմոնյանի կողմից գաղտնի հափշտակություն կատարելու առերևույթ դեպքի վերաբերյալ: Սույն գործով ամբաստանյալը հայերերեն լեզվին չի տիրապետում, այլ տիրապետում է ռուսերեն լեզվին:

Նկատի ունենալով, որ տվյալ դեպքում անհրաժեշտ է կազմված փաստաթղթերը ամբաստանյալին հանձնել այն լեզվով, որին վերջինս տիրապետում է հետևաբար անհրաժեշտ է Սոֆյա Սերոբյանին ճանաչել թարգմանիչ, նա ունի համապատասխան կրթություն, պահանջված փաստաթղթեր, նրա ձեռնհասությունը կասկած չի հարուցում, ուստի ղեկավարվելով ՀՀ նախկին քրեական դատավարության օրենսգրքի 15, 83 և 2022թ. հուլիսի 01-ից կիրառության մեջ դրված քրեական դատավարության օրենսգրքի 61 հոդվածով,

Որոշեցի՝

Թիվ 14102321 քրեական գործով հայերենից գրավոր ռուսերեն թարգմանություն կատարելու համար թարգմանիչ ճանաչել Սոֆյա Սերոբյանին /ՀՀ քաղաքացի, անձնագիր AS 0538862, ՀՀ ԱՆ տեղեկանք տրված 27.12.2019թ./ և նրան բացատրել թարգմանիչի իրավունքները և պարտականությունները, միաժամանակ ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 338 հոդվածով /որը համապատասխանում է ՀՀ քրեական նոր օրենսգրքի 503 և 504 հոդվածներին/ նախատեսված պատասխանատվության մասին:

Արարատի մարզի

դատախազության ավագ դատախազ՝



Ա.Սաֆարյան

Թարգմանիչ՝

Սոֆյա Սերոբյան Արարատ

Որոշում

Թարգմանիչ հրավիրելու մասին

« 26 » 08 2022թ.

ք.Արտաշատ

Արարատի մարզի դատախազության ավագ դատախազ Ա.Սաֆարյան, քննարկելով թիվ 27101322 քրեական գործի նյութերը,

Պարզեցի՝

Արարատի և Վայոց ձորի մարզերի ընդհանուր իրավասության դատարանի վարույթում քննվում է թիվ 27101322 քրեական գործը՝ ամբաստանյալ Ֆրունզե Մելքոնյանի կողմից գաղտնի հափշտակություն կատարելու առերևույթ դեպքի վերաբերյալ: Սույն գործով ամբաստանյալը հայերենը լեզվին չի տիրապետում, այլ տիրապետում է ռուսերեն լեզվին:

Նկատի ունենալով, որ տվյալ դեպքում անհրաժեշտ է կազմված փաստաթղթերը ամբաստանյալին հանձնել այն լեզվով, որին վերջինս տիրապետում է հետևաբար անհրաժեշտ է Սոֆյա Սերոբյանին ճանաչել թարգմանիչ, նա ունի համապատասխան կրթություն, պահանջված փաստաթղթեր, նրա ձեռնհասությունը կասկած չի հարուցում, ուստի ղեկավարվելով ՀՀ նախկին քրեական դատավարության օրենսգրքի 15, 83 և 2022թ. հուլիսի 01-ից կիրառության մեջ դրված քրեական դատավարության օրենսգրքի 61 հոդվածով,

Որոշեցի՝

Թիվ 27101322 քրեական գործով հայերենից գրավոր ռուսերեն թարգմանություն կատարելու համար թարգմանիչ ճանաչել Սոֆյա Սերոբյանին /ՀՀ քաղաքացի, անձնագիր AS 0538862, ՀՀ ԱՆ տեղեկանք տրված 27.12.2019թ./ և նրան բացատրել թարգմանիչի իրավունքները և պարտականությունները, միաժամանակ ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 338 հոդվածով /որը համապատասխանում է ՀՀ քրեական նոր օրենսգրքի 503 և 504 հոդվածներին/ նախատեսված պատասխանատվության մասին:

Արարատի մարզի

դատախազության ավագ դատախազ՝

Ա.Սաֆարյան

Թարգմանիչ՝

Սոֆյա Սերոբյան

Ա.Սաֆարյան

ՈՐՈՇՈՒՄ
թարգմանիչ հրավիրելու մասին

26.08.2022թ.

ք. Երևան

ՀՀ գլխավոր դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչության պետի տեղակալ, արդարադատության երկրորդ դասի խորհրդական Տ.Ենոքյանս, վերանայելով ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարչությունում սկսված թիվ 22-209-20 վարույթի նյութերը,

ՊԱՐԶԵՑԻ՝

2020 թվականի նոյեմբերի 20-ին ՀՀ գլխավոր դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչությունում Անուշ Մարտիրոսի Գարսանցյանին պատկանող գույքի վերաբերյալ սկսվել է թիվ 22-209-20 ուսումնասիրությունը:

Ուսումնասիրության ընթացքում անհրաժեշտություն է առաջացել միջազգային հարցում ուղարկել Մալթայի Հանրապետություն:

Նկատի ունենալով վերոգրյալը՝ անհրաժեշտ է որպես թարգմանիչ հրավիրել Մարինե Վազգենի Սերոբյանին (Ա/Հ փաստաթղթի համար՝ AN0470399, տրված՝ 13.05.2013թ., 057-ի կողմից, առկա է անգլերեն լեզվով թարգմանություն իրականացնելու համար համապատասխան կրթության առկայությունը հավաստող փաստաթուղթ՝ դիպլոմ թիվ AB 140214):

Մարինե Սերոբյանն ունի համապատասխան կրթություն, ազատորեն տիրապետում է հայերեն և անգլերեն լեզուներին, նրա ձեռնհասությունը կասկած չի հարուցում:


Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» ՀՀ օրենքի 9-րդ և 11-րդ հոդվածներով,

ՈՐՈՇԵՑԻ՝

Անուշ Մարտիրոսի Գարսանցյանին պատկանող գույքի վերաբերյալ ՀՀ գլխավոր դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչությունում սկսված թիվ 22-209-20 վարույթով թարգմանություն իրականացնելու համար հրավիրել թարգմանիչ Մարինե Վազգենի Սերոբյանին (Ա/Հ փաստաթղթի համար՝ AN0470399, տրված՝ 13.05.2013թ., 057-ի կողմից, առկա է անգլերեն լեզվով թարգմանություն իրականացնելու համար համապատասխան կրթության առկայությունը հավաստող փաստաթուղթ՝ դիպլոմ թիվ AB 140214):

Մարինե Վազգենի Սերոբյանին նախագգուշացնել «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» ՀՀ օրենքի հիման վրա իրականացվող ուսումնասիրության հիմքերի վերաբերյալ ԼՎԿԼԻՆԵՐԸ և դրա ընթացքի ու արդյունքների մասին տեղեկություններն առանց իրավասու մարմնի թույլտվության հրապարակելու համար ՀՀ քրեական օրենսգրքի 484-րդ հոդվածով նախատեսված քրեական պատասխանատվության մասին:

ՀՀ գլխավոր դատախազության ապօրինի
ծագում ունեցող գույքի բռնագանձման
գործերով վարչության պետի տեղակալ



Տ.Սերոբյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Այսպես սույն որոշման օրինակը և «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի քաղվածքը:

Իմ իրավունքներն և պարտականություններն ինձ պարզ են և հասկանալի, ՀՀ քրեական օրենսգրքի 484-րդ հոդվածով նախատեսված պարասխանավորության մասին նախագգուշացված եմ:

Թարգմանիչ



Մարինե Սերոբյան

« 28 » 08 2022 թ.